ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՇՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Դաշտավան համայնք,գ. Տոնոյան փ. 21 հեռ. /0236/6-39-80

ՈՐՈՇՈՒՄ

<<01>> դեկտեմբերի 2011 թվականի N 19-Ն

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 18 կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների պահանջներով՝ ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դաշտավան համայնքում 2012 թվականի համար տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի,շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլատվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների,ինչպես նաև մինչև 200 քմ մակերես ունեցող հասարակական և արտադրական օբյեկտների համար 7500 դրամ:

2) սույն կետի «1-ին» ենթակետում չնախատեսված օբյեկտների համար՝
3) 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10.000 դրամ;
4) 501-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15.000 դրամ;
5) 1001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25.000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

6) մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1.500 դրամ;
7) 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2.500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական

այլ օբյեկտների վերակառուցման,ուժեղացման,վերականգնման,արդիականացման աշխատանքների /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլատվություն չպահանջող դեպքերի/ համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կառույցների,վերակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1.500 դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլատվության համար տեղական տուրքը սահմանել՝ 2.500 դրամ:

4. Համայնքի վարչական տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից խմիչքների վաճառքի թույլատվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպելու դեպքում,յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2.500 դրամ;

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլատվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպելու դեպքում,յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2.500 դրամ:

5. Համայնքի տարածքում.

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլատվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ;

2) հեղուկ վառելիքի,տեխնիկական հեղուկների,հեղուկացված գազերի վաճառքի թույլատվության համար սահմանվում է՝ 150.000 դրամ:

6.Համայնքի վարչական տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գոծազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) այլ արտաքին գովազդի համար՝ 1.500 դրամ.

2) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

7.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 5.000դրամ:

8. Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ՝ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլատվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 10.000 դրամ:

Տեղական վճարներ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու,ավարտված շինարարության փաստագրելու համար,մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 5.000 դրամ;

2. համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում,անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 1.000 դրամ;

3. համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար 1.000դրամ:

Քվեարկությամբ՝ կողմ-6,ձեռնպահ-0,դեմ-0 արդյունքներով որոշումը հաստատվեց:

Ս. Աբրահամյան

Ս. Բաբայան
Վ. Բաբաջանյան
Յու. Մանուկյան
Ս. Հերիքյան
Մ. Վարդազարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱԿԱՐ Ս ՏՈՆՈՅԱՆ